

26-ը օգոստոսի, 2016 թվական
թիվ 24-08

ՀՀ առողջապահության նախարար Արմեն Մուրադյանին
Armtimes.com լրատվական կայքի լրագրող
Սեդա Ղուկասյանից
055 81 40 42 (Ghukasyansed@gmail.com)

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Մուրադյան,

- Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 եւ 27.1 հոդվածների եւ
«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում
եմ ինձ տրամադրել տեղեկություններ հետեւյալի մասին.
- «Գոնե հիվանդանոցում մահանար, ոչ թե շտապօգնության պատճառով» կես
ժամ հետո են տեղ հասել» վերնագրով, 23.08 ամսաթվով հրապարակված
հոդվածում, ներկայացնում ենք Լոռու մարզի Մարգահովիտ գյուղի բնակչի
հետ զրույց, որը դժգոհում է շտապօգնության ծառայությունից: Մեր զրուցակցի
խոսքով՝ Անտառաշեն, Ֆիոլետովո, Լերմոնտոնովո եւ Մարգահովիտ գյուղերին
ընդամենը մեկ պոլիկլինիկա է սպասարկում, այն էլ՝ ոչ բարվոք վիճակում:
- 1.Արդյոք համապատասխանում է սա իրականությանը եւ եթե այո՝ ի՞նչ է
պատրաստվում իրականացնել նախարարությունը խնդրին լուծում տալու
համար:
 - 2.Զրուցակիցս պնդում է, որ Շտապօգնության աշխատակիցները կանչի
դեպքում ստիպված են լինում ավտոբուսով գնալ մյուս գյուղ, այլ ոչ թե
շտապօգնության մեքենայով, ինչպիսին է նախարարության պատասխանը
խնդրի վերաբերյալ, եթե այն ճիշտ է, լուծելու էք արդյոք այդ խնդիրը, թե՛
բուժանձնակազմը երթուղայինի միջոցով է հիվանդի մոտ հասնելու:
 3. Վերոնշյալ հոդվածում անդրադարձ է կատարվում վթարին, համաձայն
զրուցակցիս պնդումների՝ վթարի հետեւանքով 2 տուժած ոչ թե տեղում են
մահացել, այլ շտապօգնության մեքենայի ուշ հասնելու հետեւանքով, քանի որ

23497

29 08 16

գյուղում համապատասխան ծառայություն չկա, եւ ստիպված են եղել սպասել Վանաձորից եկող շտապօգնության մեքենայի:

4. Պատրաստվում էք արդյոք Լոռու մարզի վերոնշյալ գյուղերին առանձին-առանձին հասկացնել շտապօգնության ծառայություն, եթե ոչ՝ ինչո՞ւ:

5. Շտապօգնության որքա՞ն մեքենա է նախատեսված յուրաքանչյուր մարզում եւ ի՞նչ սկզբունքով է կատարվել այդ բաժանումը:

6. Օգոստոսի 1-ին Վանաձոր-Դիլիջան ավտոճանապարհին՝ Մարգահովիտ գյուղի մոտակայքում տեղի ունեցած ավտովթարի հետեւանքով բխվել են Toyota Land Cruiser Prado մակնիշի 10 DD 017 համարանիշի եւ ՎԱԶ 21 099 մակնիշի 34 MS 925 համարանիշի ավտոմեքենաները: Ինձ հետաքրքրում է, թե ժամը քանիսի՞ն է այս վթարի հետ կապված կանչ գրանցվել, եւ քանիսի՞ն է տեղում եղել մեքենան:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Տեղեկատվության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) եւ հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

(Պատրաստ եմ վճարել տեղեկատվության պատճենահանման ծախսերը):

Կանխավ շնորհակալ եմ՝

Սեդա Ղուկասյան

26.08.2016



